# ԱՐԱՐԱՏ

## ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ․

ԹԻՒ ԺԲ․ — ՇՐՋԱՆ Զ․ 1873 ՏԱՐԻ Զ․ — ԴԵԿՏԵՄԲԵՐ 31


## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ներկայ թուով ամսագրոյս կնքեց Արարատ Զրդ շրջանը, և յառաջակայ 1874 թուականի Յունվար ամսէն պիտի սկսանի Էրդ շրջանը բոլորել։

Արարատայ պարունակութեանց ծրագիրն, թերթից քանակութիւնն և բաժանորդագինն (4 ռբլ․) անփոփոխ կըմնան։

Ոյք որ կցանկան բաժանորդագրուիլ ամսագրոյս, կըխնդրեմք դիմել Արարատայ Գործակալաց կամ ուղղակի գրել Խմբագրութեան սորին՝ հանդերձ Հայէլին։

Այս առթիւ կփութամք մեր խորին շնորհակալութիւնքը փոխարինել համայն բաժանորդաց և գործակալաց ամսագրոյս, որք սիրով հաճեցան և պատուեցին զԱրարատ՝ առաջինքն՝ բաժանորդագրուելով և համակիր ընթերցասիրելով զԱրարատ, և վերջինքն՝ բարենախանձ գործակցութեամբք աշխատութիւն կրելով և մերազնեայքը ի բաժանորդագրութիւն հրաւիրելով, որով երկոքեանն ևս միանգամայն խրախուսեցին զմեզ։